

**ՀՀ Արագածոտնի փոխմարզպետ Մուշեղ Աբգարյանի ելույթը Ավշեն համայնքում  
եզդիական կոթողի բացման ժամանակ**

/12.07.2014թ./

Սիրելի եզդիներ, հյուրեր, դուք Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնություն կազմող համայնքներից ամենամեծն եք: Դարեր ի վեր հայ ժողովրդի հետ դուք կողք-կողքի ապրել եւ արարել եք ձեր աշխատանքով եւ ջանասիրությամբ:

Մեծ է եղել ձեր դերը նաեւ թշնամու դեմ պայքարում Արցախյան գոյամարտի տարիներին, ինչը մեր երկու ժողովուրդների բարեկամական կապերի լավագույն առհավատչյան է:

Այսօր ձեր համար տոնական օր է: Այս նոր կոթողի բացման արարողություն մեծ խորհուրդ ունի, որը հավաքել է ձեզ աշխարհի տարբեր անկյուններից: Այս հանդիսավոր պահին ձեր ուրախությունը կհսում ենք մենք, հավասարապես գնահատում օրվա կարեւորությունը:

Շնորհավորում եմ ձեզ կոթողի բացման կապակցությամբ եւ մաղթում եմ ամենայն բարիք: